ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՏՈՆ

- Սուրբ Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդ աղջիկները աղի բլիթ են ուտում և ակնկալում երազում տեսնել իրենց ապագա փեսացուին: Ընդունված է եղել նաև տան տանիքին կամ պատշգամբում փոխինդ դնել և սպասել, թե երբ Սուրբ Սարգիսը կթողնի իր ձիու պայտի հետքերը: Ըստ ավանդույթի՝ այն մարդը, ում ափսեում շաղ տված ալյուրի կամ փոխինդի միջով կանցնի սուրբը, սպասվում է մեծ հաջողություն:

- Տոնի նվիրական ուտեստը փոխինդն ու խաշիլն էր, որոնց գործածությունը նախընթաց հինգ օրերի ընթացքում արգելվում էր: Այդ փոխինդը, կամ փոխինձը պատրաստում էին բոված և երկանքով աղացած ցորենի ալյուրով:

- Ամենատարածված արարողությունը դարձյալ կառուցված է ծիսական գլխավոր ուտեստի շուրջը: Ուրբաթ երեկոյան, տանտիրուհիները (հատկապես՝ տարեցները), վերցնում էին սկուտեղը, վրան մանր մաղով փոխինդ շարմաղում, մոմեր կամ կանթեղ վառում ու դնում դռան ետևը կամ դուռը բաց տան մեջ (Շիրակ), աստղերի տակ (Աշտարակ), շատ տեղերում՝ նաև եկեղեցու մոտ, հուսալով, որ Ս. Սարգիսը կայցելի և իր ձիու պայտի հետքը կթողնի փոխինդի վրա: Մեծ երջանկություն էր, երբ նրանք առավոտյան ուշադիր ստուգում ու «գտնում» էին պայտի հետքը փոխինդի վրա: